

1999.1.1

3

ԹԵԳԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՄԱՆԱԿՈՎԿՈՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.

№ 63.

ԲՈՅԱՊԵՏ Վ. ԱՐԵՐՈՒԽԱՐ

ԽՈԼԵՐԱ

ՀԱՆՐԱՄԱՍՉԵԼԻ ԶԲՈՅՑՆԵՐ

Եկ

ԽՐԱՏԱՐ

ՀԱՅՐԱՎԱՐԴՅԱՆ ՊԻՏՈՎԱԿԱՆ ՊՐԱՎԱՐՈՒՆ.

ՀԱՅՐԱՎԱՐ




ՍԻԿԻՐ

Տպագրութեան հայտ

Տիպոգրիայ Մ. Դ. Ռոտնիանց, Գօլ. պր., ձ. № 41.

1893



Дозволено цензурою. Тифлисъ, 9-го апреля 1893 г.

Անցեալ տարուայ իօլերայի հաւամարակիսան միջոցին
աՄշակիս մէջ տպագրեցի մի շարք յօդուածներ, որոնք
հուսաբակեցան Ս. Եշմբածնում առանձին բրոշիւրով
ախովերայի մասնաւ վերմապրով:

Այդ բրոշիւրի ռ.ննցած յաջուգաւթիւնը մ. լ վատանու-
թիւն է տպիո ժրատարակել այս երկրորդ պլթյկը, աւելի
ընդարձակ եւ աւելի ժողովրդականացրած:

Այս զիրքը մննը բաժանում ենք երկու մասից. Առա-
ջին մասում մննը ուսումնասիրում ենք խօլերան, իմրեն
էսպիկէմու (նախանդակ հրանդութիւն), յոյց ենք տալիս
վարակրան ճանապարհները եւ զուրս ենք բնորում պաշտ-
պանողական միջոցները:

Երկրորդ մասում մննը տալիս ներ ճանրապման խրառ-
ուր, թէ ի՞նչպէս պէտք է ժաշշկուրզը պաշտպանուի այս
իրանդութիւնից եւ ի՞նչպէս պէտք է խնամի հիւանդին:

Վերջը առաջ ենք բերում ազտանանիչ դեղերի ցու-
ցովը եւ նրանց գործածութիւնը, ինչպէս եւ բժշկական
դեղերը:

Բժշկ. Կ. Հերուտնի.

10 ապրիլ 1893.
Փիֆլիս.

4 260-60

28. 264

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼ. ԱՌԱՋԻՆ

Գլ. առաջին, ի՞նչ է խօլերան և ի՞նչովէս
են մարդիկ հիւանդանում:

Գլ. երկրորդ, Խօլերայի նշանները:

Գլ. երրորդ, Ամփոփումն:

Ի՞նչ է Խօլերան եի ՄԵՐԻՒԿ ի՞նչովէս են
ՀԻՒԱՆԴԱՆՈՒՄ

1. Խօլերան ԲՈՒՆԸ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԵԼՈՒ ԶԵՒՅ,

Խօլերայի բունը Հնդկուտանն է, նրա օրօ-
րոցը Հնդկաստանի սրբազնի գետ Գանդիսի
ափերն են: Այնուղ խօլերան մշտական է գա-
ռնը, իսպակս մեր մեջ տեսդը; Այնուղից եղ-
բաթն այս սարսափելի հիւանդութիւնը յան-
կարծ կայծակի նման անցնում է ամբողջ աշ-
խարհի վրայով, միլիօնաւոր զոհեր տանում
և էլի գաղարում:

Սեր երկիրը չորս սարսափելի խօլերայ
է աեսել. 1823 թ., 1830-ին, 1847-ին և
1892-ին: Բացի այս չորսը, եղել են և ուրիշ
տարիներ, բայց աւելի թուլ կերպով:

Անցած ամառ 1892-ին խօլերանցեր Կովկասում մօտ հարիւր հաղար կետնք իւրեց:

Մեր քաղաքներից ումենաշատ լվասանւածներն էին Բագուն և Երևանը, թէև համարեառ ոչ մի քաղաք և ոչ մի գիւղ ապաս չժնաց այս հիւանդութիւնից:

Եյս ասրասփելի ասռապանքի միջոցին, երբ որ անկութ՝ զաղանը իր ձանկերը ասրածելէր մեր երկրի ամեն մի անկիւն, մենք դեռ յոյս ունէինք, որ ձմեռը կը գայ և վերջ կը դնի կը բան: Բայց ձմեռն էլ վրա հասաւ (ու այն էլ այսպիսի խիստ ու երկար ձմեռ), ձիւնն էլ ծածկեց գետինը ու խօլերան թէև թուլացաւ, բայց բոլորովին չ'զադարեց: Ելի տեղ տեղ նա բարձրացնում էր իր դլուխը և մեղ սարսափի մէջ ձգում: Հիմի, որ ամառն սկսում է, խօլերան առելի հեշտութիւնով կարող է նորոգուել:

Բանն այն է, որ թոյնը ընկել է մեր եր կիրը ու դեռ չի ոչնչացել: Աստուած տաճ, ո՞ր մենք սխալ դուրս գանք. Աստուած տաճ, ո՞ր հիւանդութիւնը բոլորովին վերանայ մեր երկրից: Բայց նվ կարող է իմանալ, թէ ինչ է լինելու այս ամառ: Ո՞վ կը համարձակուի ասել թէ խօլերան կրկին չի նորոգուի, նոր ոչ չի առանայ և առելի անողորմ կերպով կառորածներ չի անի մեր մէջ: Ընդհակառակն հմուտ

բժիշկները այն կարծիքի են, թէ խօլերան անշուշտ պիտի կրինուի:

Աւրեմն ամառը պէտք է սպասել այս հիւանդութեան երեալուն: Եւ պէտք է սպասել, որ այս ամառ նա աւելի սասանիկ է լինի: Նա կարելիէ, որ այս ամառ նա յանկարծ շատ աեղբերում միանգամից գլուխ բարձրացնի և ոչ թէ հեռուից գայ ու կամաց կամաց ասրածուի, ինչպէս այդ եղաւ անցեալ ամառ, որովհեան նրա թոյնը անցած ասրուանից ամէն տեղ մնացել է:

Աւրեմն մենք պէտք է հաւասանք, որ խօլերան նորոգուելու է և պէտք է պատրաստ լինենք այդ թշնամու հետ կռւելու:

2. ԽՈԼԵՐԱՆ ԱԱՏԾՈՒ ՊԱՏԻՓ ԶԵ:

Երբ մի երկրի վրա մի անբազութիւն է գալիս, հասարակ ժողովուրդը չ'պէտք է խաչի իր ձեռներն ու տաի «Աստուծոյ կամքն է»:

Աստուած մարդուս առել է խելք, բանականութիւն, որ նա պահպանի իր անձը և ազատ պահի իրան վասնղից: Նթէ ես դնամդիտմք գայլի ձանկն ընկնեմ, Աստուած ինչ անի: Խօլերան էլ մի գայլ է, որը կուլ է առլիս

այն մարդկանց, որոնք զոռով իրանց նրա ձանելըն են զցում:

Անցած խօլերաների պատմութիւնը ցոչց է տալիս, որ այն հիւանդութիւնը այն երկրումըն է (օրինակ Պարսկաստան) շատ կրորած անում, որտեղ մարդիկ, ինչպէս ասացի, կարծում են, թէ այդ Աստու պատուհամ է: Խաչը: Որովհետև այդպիսի մարդիկ յուստհատում են և չեն վատահանում կոռւել աղետի հետ: Իսկ այն երկրներում (օրինակ Եւրոպացում), որտեղ ժողովուրդը հասկացել է, թէ հիւանդութիւնը Աստուց չէ, այլ մարդուցիրանից է, խօլերան զորութիւն չունի: Զէ, Սստորած արգար է: Ով որ ասի թէ նա խօլերան ուղարկել է խեղճերին, աղքամներին, որոնք հարուստներից հաղար անդամաւելի են կոսորում, պատժելու համար, նա մեղք է անում:

Աւրեմն խօլերան Աստու պատիժ չէ: այլ մի հիւանդութիւն է, ինչպէս որ միւս հիւանդութիւններն են: Աւ քանի որ մենք աշխատում ենք բոլոր հիւանդութիւնների առաջն առնել, ինչի՞ պիտի ձեռներս խաչենք ու այս հիւանդութեան հետ էլ չկոռւենք:

Հիւանդութեան հետ կոռւելը երկու տեսակ է լինում: Մէկ, պէտք է այնպէս անենք,

որ չհիւանդաննք: Մէկ էլ, երբ որ, Աստուած չանի, հիւանդաննք, պիտի խորչն առանց ժամանակ կորցնելու թշշկուենք:

Այս դժբի նպատակն էլ հենց այն է, որ ցոչց տանք նախ՝ թէ ինչ պիտք է անենք, որ չհիւանդաննք խօլերալով, և երկրորդ՝ ինչ դեղեր ու ինչ միջոցներ պիտի զործ գնննք հիւանդութեան ժամանակ:

Մի խօսքով մեր միտքն է ամենին խօլերայի հետ կոռւել առխորհցնել:

Բայց մէկի հետ կառւելոց առաջ, պիտի լաւ զիտենալ, թէ պիմացի թշշկամին ով է: Մենք էլ խօլերայի հետ կոռւելու ու նրան յաղթելու համար պիտի ծանօթանանք նրա հետ, տեսնենք ինչպէս է ծնւռում նու, ինչպէս է զարդանում ու ինչպէս է բանում մարդկանց:

Երբ որ լաւ կ'իմանաք այս հիւանդութեան ինչ լինելը երբ որ լաւ կը քննենք մարդկութեան այս սարսափելի թշնամու թագի կողմերը, այն ժամանակ մենք կարող կ'լինինք մեր ոչժը հենց այն թույլ կողմերի վրա դարձնել ու աւելի հեշտ խեղճել նրան:

Եւ երբ որ դուք կ'ծանօթանաք խօլերայի հետ, դուք էլ մեզ բժիշկներիս պիտի կ'առենք որ նա այնքան էլ սարսափելի թշնամի չէ, որքան կարծում են, կ'առենք, որ մենք նրա-

նից ուժով ենք ու, եթէ ուզենանք, կարող ենք
սպանել նրան:

Խօլերան յաղթում է միայն այն մարդկանց,
որոնք զէնք ու զբահ չունեն, իսկ ով որ լաւ
սպատրաստւած է, նրան խօլերան չի համարձա-
կուի մօտենալ:

Մենք ուզում ենք հենց այդ զէնքերը տալ ժո-
ղովուրդի ձեռքը, ժողովուրդն էլ, մեզ հաւա-
տալով, պիտի այդ զէնքերը պինդ բանի ու
մեր ցոյց տուածի նման գործ դնի թշնամու-
դէմ:

Աւրեմն տեսնենք թէ ինչ է խօլերան:

3. Ի՞՞նչ է Խօլերան եր ՄԱՐԴ ԻՆՉՈՒ Է ՀԻՄԱՇԹԱՆ
ԳԱՅՈՒՄ

Խօլերան մի ծանր հիւանդութիւն է, որը
յանկարծ կարծ ժամանակի մէջ տոսրածւում է,
ամբողջ աշխարհ: Աւզում եմ ասել, թէ խօ-
լերան մի տեղում չի մնում: Մի քաղաքում,
մի գիւղում որ խօլերայ է երկում, հաստատ
կարելի է ասել, որ նա այդ տեղում չի ո-
չընչանայ, այլ կանցնի հարեւան քաղաքներն
ու գիւղերը: Այսպէս, քաղաքից քաղաք
գիւղից գիւղ անցնելով, այդ հիւանդու-
թիւնը վազում է երկրից երկիր, իր ճա-

նապարհի վրա հադարսոր զոհեր թողնելով:
Այս բաները ամեննքը գիտեն: Ամենքն էլ
գիտեն որ խօլերայի առաջնութէլը հարգեցած մը
ցած է լինում: Օրինակ, մի մարդ Երևանում հի-
ւանդանում է ու զնում է մի զիւղ, իշնում է
մի տուն ու ացնոեղ նրա հիւանդութիւնը
սաստիանում է, նա պատկում է ու անեցիք
ինստում են, աիրութիւն անում նրան: Այս
մարդը մեռնում է ու մի երկու երեք օրից յետոց
յանկարծ այն հիւանդին ինհանդներից մէկը
հիւանդանում է, նրանից յետոյ մի ուրիշն է
հիւանդանում ու այսպիսով, իրարից կաչելով:
այս տան մէջ մի քանի հոգի հիւանդանում
են ու մեռնում: Դրացիքը զալիս են այս հի-
ւանդին աեսութիւն, նստում են նրա աեզա-
շորի մօտ, գիւղչում են նրան, ձեռը բւնում
են, կամ համբուրուում են նրա հետ ու իրանց
տուն գառնում: Մի երկու օւ չի անցնում;
այդ հարվաններից մէկը կամ մի քանիսը յան-
կարծ առնեում են խօլերայով: Սրանցից հի-
ւանդութիւնը անցնում է միւս տները ու շատ
կարճ ժամանակում ամբողջ գիւղը ու քաղաքը
լցում է հիւանդներով:

Կարող է ուրիշ կերպ պատահել: Մի հի-
ւանդ մի վարակուած տեղից, —այսինքն այն
տեղից, որտեղ հիւանդներ են եղել, —գալիս է

— 14 —

մի առողջ քաղաք կամ զիւղ, հիւանդանում է ու մեռնում: Մի քանի օրից չետոյ ացդ տեղում հիւանդանում է այնպիսի մարդ, որը եկողին ոչ մօտեցելէ, ոչ էլ տեսել: Խնչող:

Եթէ լաւ քննենք, կ'աեսնենք, որ այս հիւանդութեան պատճառը դարձեալ նույն է՝ կող հիւանդն է եղել: Եթէ լաւ հարց ու փորձ անենք, կ'իմանանք, որ այս նոր մեռնողը այն եկող հիւանդին թէւ չի տեսել, բայց կամ լուացել է նրա շորերը, կամ դործ է, ածել նրա բաները, կամ խմել է այն գետի ջուրը, որի մէջ թափած են եղել հիւանդի արտաթորութիւնները (այսինքն, նրա դուրս գնացածը ու նրա փախածը): Ամենքը գերեն, թէ ինչքան երկիւդալի է հիւանդի շորերը հագնել, կամ նրա տեղաշորերի մէջ պասկել, որովհետեւ այս բաների վրա անպատճառ ընկուծ է, լինում հիւանդի արտաթորութիւններից կամ նրա փախանքից:

Հիւանդի մօտ դնալը, ժամերով նրա սենեակում նստելը, նրա հետ խօսելը կարող է բոլորովին անմնաս անցնել, այն ինչ նրա տեղերում պառկելը, կամ նրա շորերը հագնելը չափազանց երկիւդալի բան է:

Այս է պատճառը, որ խօլերայով հիւանդի կամ մեռածի բոլոր բաները պէտք է

կամ այրել, կամ ազտահանել, այսինքն, թոյնից մաքրել, ինչպէս մենք ցոյց կ'տանք այս դրափի վերջը: Այս ամէնը ցոյց է տալիս, ոք խօլեան օրի Թշով չի անուն: Եթէ նա օգի միջով անցնէր, բոլորը պիտի կոտորուէին և առաջինը հէնց բժիշները, քանի որ նըրանք զիշեր ցերեկ հիւանդների հետ են լինում:

4. Խօլերային Թունը:

Խօլերային հիւանդութեան պատճառը մի թոյն է, որի անունը խօլերային լրացն է

Այս թոյնն է մեզ հիւանդացնողը: Մինչեւ որ այս թոյնը չընկնի մարդու ստամոքսը, նա չի հիւանդանալ խօլերայով: Ուրեմն, ով որ չի ուզում հիւանդանալ, նա պիտի աշխատի այնպէս պահել իրան թէ մաքրութեան և թէ առհասարակ կեանքի կողմից, որ ացդ թոյնը նրա վրա չազդի: Այսակզից երեսում է որ Նելլշնեն հէնց այդ կոչ լրացն է:

Հիմի պիտի մենք լաւ ծանօթանանք, ինչպէս ասացինք, այդ թշնամուն, որ կարողանանք կռուել նրա հետ: Կաւ պէտք է հասկականանք, որ խօլերային լրացնը գոնուում է Թեայն հիւանդի աբանութիւնութեանների ու նեղութու-

Արտադերքի մէջ: Հիւանդի դուրս գնացածն ու
նրա փախածն են խօլերայի պատճառը:
Բայց ինչ ճանապարհով է մոնում մեր
ստամբուր այս թոյնը:

Երբ մենք կը հասկանանք, թէ էնչպէս ենք
կուլ տալիս խօլերայի թոյնը, այն ժամանակ
զգոյշ կ'լինենք:

5. ԱՐՏԱԹՈՐԱՎԻԹԻՄՆԵՐԻ:

Հիւանդին խնամողները և նրա մօտ բա-
րեկամները կարող են բանուել հիւանդի ար-
տաթորութիւնները թափելով, կամ արտա-
թորութիւններով կեղոտած բաներին ձեռ-
տալով: Այն ժամանակ ձեռքին կպչում է ար-
տաթորութիւններից մի չնչին մասն ու, ինչ-
քան էլ փոքր լինի այդ մասը, նրա մէջ էլի
խօլերայի թոյնից շատ կայ: Բաւական է ու-
րեմն, որ այդ մարդ իր վարակուած ձեռքը
բերանը տանի, կամ անլուայ հաց ուտի և,
շատ կարելի է, որ նա ինքը հիւանդանայ,
որովհետև թուքի, կամ կերակուրի հետ նա կուլ
կը տայ իր ձեռքին կպած թոյնը:

Վարակուածն (կպչելը) կարող է պատահել
ուրիշ կերպով էլ: Հիւանդի արտաթորութիւն-
ները տանում են թափում, օրինակ, արտաք-

նոցի նստարանի վրա կամ մի ուրիշ տեղ, իսկ
երբ մի ուրիշը մտնում է նոյն տեղը, կարող
է քսուել այդ վարակուած կէտին և նոցնպէս
հիւանդանալ:

Հաւանդի փոխնորդը (սպիտակեղէնը), նրա
անկողինը (աեղաշորերը), հազուսուլ խօլերայի
թոյնի բներ են:

Եւ, իրաւի, այդ բաները աղտոտում են
հիւանդի արտաթորութիւններով և ուրեմն
ամենասարսափելի վարակիչ (հիւանդացնող) ոյժ
ունեն: Այս է պատճառը, որ բժիշկների կար-
ծիքով հիւանդին սպատկանող բոլոր բաները
ամեաներիկիւզալի բաներ են, որովհետև նրանց
միջոցով հիւանդութիւնը սաստիկ տարած-
ում է:

Վազուց արդէն յայտնի է, որ լուացա-
րարները աւելի են հիւանդանում, քան թէ
միւս արհեստաւորները, և սրա պատճառը այն
է, որ նրանք լուանում են խօլերայով հիւանդ-
ների սպիտակեղէնները:

Հարկ չը կայ կրկնելու, որ նոյն արտաթո-
րութիւններից մի չնչին, մի աննշմարելի մա-
սըն կարող է ընկնել մեր ուտելիքի վրա ու
նրա հետ մեր ստամբուր մտնել: Ճանճերը կա-
րող են իրանց թեկների վրա խօլերայի թոյ-
նը կրել և յետոյ մեր ուտելիքի. մրգի, հացի

և առհասարակ սառը կերակուրների վրա դը-
նել ու հիւանդացնել մեղ։ Այս է պատճառը, որ
մենք խորհուրդ ենք տալիս ծածկել ճանձե-
րից բոլոր սառն ուտելիքները և մրգերը։

6. ԶՈՒՔՆ.

Հիմի մենք պիտի դառնանք խօլերայով հի-
ւանդալու մի ուրիշ պատճառի վրա. — այդ
ջուրն է և զլիսաւորապէս կեղտոտ ջուրը։ Թող
ոչ ոք չը մոռանայ, որ կեղտոտ և կանդնած
ջրի մէջ խօլերայի թոյնը երկար պահպան-
ւում է և աճում։ Մեծ քաղաքներում (օր.
Թիֆլիզում) գետերը սարսափելի կերպով աղ-
տոաւած են, քանի որ քաղաքի բոլոր աղտո-
տութիւնները այնտեղ են թափուում։ Հազարա-
ւոր օրինակներ ցոյց են տալիս, որ խօլերան տա-
րածում է կեղտոտ ջրերի ափերով։ Եթէ մի
կեղտոտ գետակի կամ առուի վերին մասերում
մի վարակուած գիւղ կայ և եթէ այդ գիւղի
կեղտոտութիւնները ջուրն են ածում, ան-
պատճառ հիւանդութիւնը կամաց կամաց կիշ-
նի ջրի հետ ու կը վարակի (հիւանդացնի) նրա
ափերը։ Այսպիսի օրինակներ անցած ամառ
ամեն տեղ տեսնուեցան։

Ի՞նչիցն էր, որ Երևան համարեա երեք
մարդուց մէկը մեռաւ։ Դրա պատճառը քաղա-
քի անտանելի կեղտոտ առուներն են, որոնք
վազում են քաղաքի փողոցներով։ Այս առու-
ները անցնում են բակերի միջով, այնուղի հա-
ւուզներ են կազմում։ Այս հաւուզները խօլե-
րայի բներ են. այստեղ են լուանում թուր-
քերն ու հայերը իրանց կեղտոտ շորերը, այս-
տեղ են լողանում և իրանց նամազը կատա-
րում, մի խօսքով այս առուներն են թափում
իրանց բոլոր կեղտերը։ Հասկանալի է, որ եթէ
այդ տներից մէկի մէջ հիւանդ կայ, նրա շո-
րերն էլ այդ ջրի մէջն են լուացւում, նրա ար-
տաթորութիւններն էլ այդ ջրի մէջ թափում։
Այնպէս որ այդ ջուրը բակից փողոց դուրս
գալիս արդէն խօլերայի թոյնով լիքն է և,
ուրեմն, ով որ գործ ածի այդ ջուրը, պէտք է
հիւանդանայ, վարակուի։ Այդ ջուրը հայաթից
— հայաթ, փողոցից — փողոց անցնելով, քա-
նի գնում է աւելի է կեղտոտում և քանի գը-
նում աւելի է տարածում այդ հիւանդու-
թիւնը։

Ալէքսանդրօսօլի դաւառում մի ամբողջ
գիւղ համարեա ամայի դարձաւ, որովհետեւ
գիւղացիք մի կեղտոտ առուի ջուր էին գործ
ածում։

Բագւում՝ նոյնպէս շատ կոտորուեցաւ ժողովուրդը ջրի վասութեան պատճառով։ Թիֆլիզում խօլերան քիչ տարածուեց նրա համար, որ քաղաքացիք միացն աղբիւրների ջուր էին գործ ածում (ջրանցք)։ Բայցի գետերի, լճակների, գեօլերի ջրերը, ջրհրձի ջռուն էլ կարող է թունաւորուած լինել։ Աթէ, օրինակ. ջրհորը կեղտառ առուի մօտ է փորուած, կամ արտաքնոցի հորի մօտ, նրա ջուրն անպատճառ թունաւորուած է, որովհետեւ առուի ու արտաքնոցի կեղտառութիւնները կարող են ծըծուել ջրհորի ջրի մէջ։

Ես այսքան երկար կանգնեցի ջրի վարակման վրա նրա համար, որ ցոյց տամ, թէ ինչ ահազին նշանակութիւն ունի ջուրը խօլերացի տարածուելու մէջ։

Խօլերացի ժամանակ մեր ամենավնասակար և ամենաերկիւղալի թշնամիքը նախ. հիւանդի կեղտառութիւններն են, յետոյ ջուրը։ Խօլերացի ժամանակ մենք պիտի ոչ մի ըստէ չը պիտի մոռանանք, որ անհանգույթ ջռուն պէղն ու պէղն լայն է, չ'պիտի մոռանանք, որ մենք ջռուն կարող են մեղմ մեղմ։

Բայց դուք կ'ասեք ինձ. «Պր. բժիշկ! այդպէս էլ բան կը լինի, առանց ջուր էլ մարդ կ'ապրի։ Մենք գեղացի-ռաշբար ենք, ամառը

գնում ենք մեր վար ու ցանքին, բանում ենք, քրանում ու ծարաւում. է՞ս դուք որ հիմի մեզ իրաւունք չէք տալիս ջուր խմելու, բայ ինչ խմենք, կարողութիւն էլ չունենք, որ Կամեթու դինի խմենք»։

Դրան ես կը պատասխանեմ։ Ես ձեզ արգելում եմ հռամ ջռուն խմել, ձեր խմած ջռունը պէտք անդադամեն եփ պրած ու սառեցրած լինի։ Զուրը լաւ եփ կ'տաք, կ'լցնէք կժերի մէջ ու բերանը պինդ կը կալնէք և կը դնէք սառը տեղ, օրինակ. սառը ջրի մէջ, որ հովանաց, յետեց կը խմեք, կը լուացուեք նրանով ու էլլի բերանը կը փակէք։

Մէկ էլ ասեմ. երկերայի ժամանակ լեկ գետենի և լեկ ջրհրձի ջռունը անդադամեն մրայն եփ պրած պէտք է խմել։ Ուրիշ բան է, եթէ զիւզում լաւ ջուլալ աղբիւր կայ. այդպիսի աղբիւրի ջուրը վնասակար չէ, որովհետեւ խօլերացին թոյնը չի կարող անցնել նրա մէջ, այն էլ եթէ ջուրը վերցնէք աղբիւրի ակից։ Ինչ ջուր որ խմելու լինէք, պէտք է քիչ խմեք։

7. ԽՈԼԵՐԱՆ ԿԵՂՏՈՏ ՏԵՂԵՐԻՆ Է ՏՄՐԱԾԻՌԻՄ:

Մինչև հիմի մենք քննում էինք այն ճառապարհները, որոնցով խօլերային թոյնը մի տեղից միւսն է փոխում ու մեզ վարակում:

Բայց ամենքը դիտեն, և այս տարուայ փորձն էլ ցոյց տուեց, որ խօլերան ամեն տեղ մի տեսակ ոյժով չի լինում: Մի քաղաքում կամ դիւղում նա սաստիկ ջարդ է անում (ինչ-պէս Բագրում և Երևանում այս տարի), մի ուրիշ տեղ ընդհակառակը, նա չի զարդանում ու քիչ զոհեր է տանում:

Ի՞նչ է սրա պատճառը:

Սրա պատճառը երկրի կեղտոտութիւնն ու մաքրութիւնն է:

Խօլերան աճում ու զարդանում է ինչպատ գիւղէրում ու քաղաքներում: Առ հասարակ այդ թոյնը կարող է աճել միայն կեղտոտ հողի վրա: Այն երկիրներում, որտեղ գիւղերն ու քաղաքները մաքրու են պահուում, այս հիւանդութիւնը շատ զոհեր չի տանում: Այդ է պատճառը, որ մի և նոյն քաղաքում կամ դիւղում խօլերան բուն է դնում քաղաքի աղքատ ու կեղտոտ մասերում: Հարուստ ու մաքրութաղերում խօլերան շատ քիչ է զարդանում:

Գիւղերում շատ անասուններ կան: Սրանք

են որ կեղտոտում են զիւղը: Գիւղացիք հաւաքում են անասունների արտաթորութիւնները, չորացնում են ու վառում: Խօլերայի ժամանակ մենք չենք արդելում ցանի գործածելը: Կենդանաւ արտաթորութիւնները վնասակար չեն, ևս առաւել երբ որ չորացրած են:

Բայց գիւղերում երկիւղալի բանն այն է, որ աներում առանձին արտաքնոցներ չ'կան, և գիւղացիք ուղղակի պատերի քամակին, կամ հէնց նոյն խոկ բասմաների վրա են դուրս գնում: Այնպէս որ այդ կեղտոտութիւնները մնում են բաց օդում, աների անկիւններում ու փողոցներում և խօլերայի բուն դառնում: Այս է պատճառը, որ գիւղերում անպատճառ պիտի գիւղացիք հաւաքուեն ու մի հնար գանեն, որ մարդիկ գետնի վրա չ'թափեն իրանց արտաթորութիւնները և հողը չ'կեղտոտեն: Չպիտի մոռանանք, որ խօլերային թոյնը գտնուում է մարդկանց արտաթորութիւնների (գուրս գնացածի) մէջ և ուրեմն այս կեղտոտութիւնները անկարելի է տների առաջ, կամ պատերի տակ թողնել: Եթէ հիւանդի գուրս գնացածը չ'ոչնչացնուի, եթէ նա մնայ բակերում, տան քնչերում, պատերի տակ, այդ գիւղը չի ազատուի խօլերայից: Քաղաքների ու գիւղերի հասարակութիւ-

Նը պէտք է անպատճառ մի ճար անի ու իր քաղաքը կամ գիւղը մաքուր պահի այս կեղառութիւններից:

Այս է պատճառը, որ մենք խորհուրդ ենք տալիս այն տեղերում, որտեղ արագնոց չը կայ, հանր հռչէր փռչէլ (1 արշին խորութիւնով) գիւղից դուրս, ինչպէս այդ մանրամասն առում ենք իրադիմութիւնը:

Եւս առաւել պիտի արգելուի բասմանների վրա թափել այդ կեղառութիւնները, որովհետեւ ցանին ձեռն են տալիս և ուրեմն կարող են հիւանդանալ:

Սաստիկ պէտք է արգելել նմանապէս գետը թափել այդ կեղտերը, որ չվարակեն այդ գետի ջուրը դործ ածողներին: Բայց ամենից շատ զգոյշ պիտի լինել խօլերայով հիւանդի արտաթորութիւնների հետ, որովհետեւ հէնց նրանց մէջն է թոյնը:

Այդ կեղտերը պիտի անպատճառ ոչնչացնել և ամենալաւ ոչնչացնող բանը — իլրն է:

Կիրը խօլէբոյն լոյնը ոչնչացնուած է. գիւղացիների համար իլրը ամենայժեանուած էն է: (Տես Խը-րասոներ):

8. ԽՈԼԵՐԸՆ ԹՌՅԼ, ՍՆՄՆՈՒՆԴ ՄԱՐԴԿԱՆՅ Է ԲՈՒՆՈՒՄ:

Միւս հիւանդութիւնների պէս խօլերան թոյլ նիհար, անսնունդ, տկար մարդկանց է բռնում: Առողջ, լաւ կազմուածքով, լաւ ուսող խմաղ, լաւ ապրողներին նա դժւար է մօտենում: Ըսդհակառակը, քանի մարդ նուազ է, քանի նրա սնունդը պակաս է, քանի նա թոյլ է, այնքան նա շուտ կը հիւանդանաց խօլերայով:

Ուրեմն, երբ մի երկրում հիւանդութիւն կայ, ժողովուրդը ոչինչ չպէտք է խնացի լաւ ունունդ ունենալու համար:

Բայցի մանմինը, մարդ իր սիրալ, իր հոգին էլ պիտի լաւ պահի: Ամեն տեսակ հոգսեր, մըտասան ջուրութիւններ թուլացնում են մեզ:

9. ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ՎՆՍՍ Է ՏԱԼԵՐԸ ՄԱՐԴՈՒՆ ԽՈԼԵՐԸՆ Խ-
ԽՈՒԹԻՒՆԵՐ:

Խօլերայից վախեցողը ոչ մի բռպէ հանդըսառութիւն չունի: Գիշեր ցերեկ ահը նրա սըրառումն է, նա վախենում է մարդու մօտենալ, նրա հետ խօսել, բարձի թողի է անում իր գործերը, հաց չի ուտում, վախենալով՝ չը լինի թէ թիւնաւորուի: Նրա խելքը միտքը

զրանով է զբաղուած։ Երբ որ մարդ այսպիսի դրութեան մէջ է, նրա ամբողջ մարմինը քանդում է, նա յոդնում է, նուազում, լղարում ու ՚ի հարիէ աւելի հեշտ վարակում, քան թէ ուրիշները։ Ասուած չանի, որ այդ մարդու փորը մի քիչ ցաւի, կամ սիրալ խառնի, կամ գլուխը ցաւի, նա՝ կարծելով, թէ խօլերայ է կպել, լեզապատառ կ' լինի։

10. ՄԱՐՍՈՂԱԿԱՆԻ ՏԿԱՐՈՒԹՅԻՒՆԸ Վ.ՆԱ.Ս է։

Խօլերայի միջոցին մարդ պիտի աշխատի, որ չը խանդարի իր ստամոքսը։

Չափազնց ուժելը ու շափազնց եմելը շաբաթներին է։

Շատ ուսելն ու շատ խմելը հիւանդացնում են մեր մարսողականը և այն ժամանակ վարակուելը (հիւանդանալը) աւելի հեշտ է լինում։

Եւ, ճշմարիս որ, կիւրակի ու տօն օրերից յետոյ (երկուշաբթի, երեքշաբթի) աւելի շատ մարդ է հիւանդանում, քան թէ միւս օրերը։ Ինչի՞։ Որովհեաւ կիւրակի ու տօն օրերը մարդիկ իրանց քէմի են տալիս, անկարդ ուսոււմներում են ու իրանց ստամոքսը խանդարում։

Խօլերայի ժամանակ երբեք հարդ չ' ունեն երան աբբեցողութեան դայ։

11. ԼՈՒԺՈՂԱԿԱՆՆԵՐ, ԱՆԿԱՐՈՒ ԴԵՆԵՐ, ՀԵԴՈՒՆՆԵԼԸ

Ամեն փորացաւի դէմ շատերը վախից զանազան լուծողականներ են խմում։ Խօլերայի ժամանակ պէտք է շատ զգոց լինել, որովհեաւ լուծողականները կարող են խանդարել մեր ստամոքսը։

Առաջն բժշկների անհանոն էերառվ պահանջները ընդունելը սոտոբէն երիեւղավ է, որովհեաւ կեղերը նոյնպէս խանդարում են մարսողութիւնը ու հեշտացնում վարակուելը։ Երբէք չ' պէտք է հաւասար այն մարդկանց, որոնք ձեզ հազար ու մէկ գեղեր են առաջարկում։

Փողովուրդը պիտի հասկանայ վերջապէս, որ բժշկութիւնը կօշկակարութիւն չէ։ Կօշիկ կարելու ձեզ միշտ նոյնն է, որովհեաւ կօշիկները միշտ իրար նման են, այն ինչ դուք երկու հիւանդ չէք գտնի, որոնց հիւանդութիւնը մի և նոյն տեսակ լինէք։ Դուք չէք գտնի երկու մարդ, որոնք նոյն կերպով հիւանդանային և հիւանդութեան միջոցին նոյն նշան-

Ներն ունենալին։ Ուրեմն բժշկութիւնն էլ չի կարող միակերպ լինիլ։ Մի գեղ, որը մի հիւանդի օգուտ է, կարող է միւսին վնասել։ Այս բաները միայն հմուտ բժշկը կարող է որոշել, իսկ ժողովուրդը կարող է գործ ածել միայն այնպիսի միջոցներ, որոնք անվնաս են։ Այս միջոցները մենք առաջ ենք բերում գըրքիս այն դլսում, որի մէջ խօսում ենք հիւանդին բժշկելու մասին։

11 ԱՐԵՒՆ Ս.Ռ'ԵԼՆ ՈՒ ՍԱՌԸ ԶՈՒՅՔ։

Մեր ժողովուրդը այս տարի ցոյց տուեց, որ սկսում է հաւասար ու լսել բժշկների խորհրդին, բաց էլի աեղ-տեղ մարդիկ շատ վնասներ էին հասցնում իրանց, զանազան վնասակար միջոցներ գործ գնելով։

Օրինակ, շատ աեղեր սովորութիւն կայ հիւանդներից արիւն ասնել։ Այս սովորութիւնը մեր հայերը վեցրել են թուրքերից։

Արեւն առնելն ամենառարսափելի կարող է պաշտպանել։ Պարսկաստանում այնքան արիւն են առնում, որ առողջ մարդն էլ կը մեռի, ինչ թէ հիւանդը եւ, ճշմարիս որ, այնաեղ մի ժամանակ օրը 1000 մարդ էր մեռ-

նում։ Նոյնը Երևանումն էր։ Ալէքսանդրապօլում հայերը խօլերայի սկզբին արիւն էին առնում ու սառը ջուր ածում հիւանդի վրա, բայց յետոյ տեսան, որ մեռնում են, սկսեցին տաք ջուր ածել։

Հիմի տեսէք, թէ ինչ աստիճան անմիտ բան է խօլերայով հիւանդից արիւն առնելը։

Խօլերան նրանով է երկիւղալի, որ նա սահմանացնուած է մել արիւնը. արիւնը իր ջուրը կորցնում է ու թանձրանում է։ Այդ է պատճառը, որ այդ ողորմելի հիւանդները չորանում են ու մեռնում։ Մենք, բժիրէներս, ընդհանիւակը ջուր ենք ածում երաշների մեջ, որ արիւնը շափանայ։

Ուրեմն, մեջ խօլերայով հիւանդից արիւն առնել, այդ նշանակուած է սպանել նրան։

Մի հաւատաք, ինչ որ կ' պատմեն ձեզ այս բժշկութեան մասին։ Եթէ արիւն առնելուց ու սառը ջուրը կոխելուց յետոյ, մի հիւանդ առողջացել է, նրա հիւանդութիւնը խօլերա չի եղել, այլ հասարակ փրկուցաւ է եղել։

Ժողովուրդը պէտք է հեռու պահի իրան նմանապէս զանազան կալգաններից ու դրանման գեղերից, որոնք ոչ մի հիւանդի չեն

կարող առողջացնել։ Եթէ լաւացողներ եղել
են, դրանք հասարակ վտրացաւ են ունեցել և
ոչ թէ խօլերա։

ԳԼ. ԵՐԿՐՄՐԴ

ԽՈԼԵՐԱ ՀԻՒԱՆԴԱՒԹԵԱՆ ՆՇԱՆՆԵՐԻ։

Մինչև հիմի մենք ցոյց տուեցինք, թէ ի՞նչ
է խօլերան, ի՞նչ ճանապարհներով են կոչում
մարդիկ և ի՞նչ է հեշտացնում վարակուելը։

Մենք տեսանք, որ խօլերան վարակիչ հի-
ւանդութիւն է, նրա թոյնը գտնեում է մի-
միայն հիւանդի արտաթորութիւնների մէջ,
որ խօլերա կոչելու համար անպատճառ պէտք
է որ վարակուղն կամ շատ մօտ լինի հիւան-
դին, դիակի նրան, նրա շորերը հագնի, նրա
անկողնում քնի, համբուրուի նրա հետ, նրա
հետ հաց ուտի և այլն, կամ թէ չէ, օրինակ-
ջրի կամ կերակրի հետ կուլ տայ այդ թոյնը։
Տեսանք, որ խօլերան սպանում է թոյլ, ուժից
ընկած, անսնունդ մարդկանց և խօլերային
թոյնը աճում է միայն հիւանդ ստամփսի և
աղիքների մէջ։ Այս բոլորից երեսում է, որ
այս հիւանդութիւնը մի անդիմադրելի, ան-

յաղթելի պատուհաս չէ, այլ այնպիսի մի ցաւ-
է, ինչ որ քութէշը, բգացաւը, կարմբուկը և
այլն։ Յուսով ենք, որ կարդացողը էլ չի ցու-
սահատուի և ձեռները կապած, սարսափի և
յուսահատութեան մէջ չի սպասի մահին, այլ
կը կոռուի թշնամու դէմ իր ձեռքը տուած
զէնքով։

Երբ խօլերային թոյնը մոել է մեր ներ-
սը ու բուն է դրել մեր աղիքներում, այն-
տեղ նա աճում ու բազմանում է և այն ժա-
մանակ երեսում է խօլերային հիւանդութիւնը։

Տեսնենք, թէ ի՞նչ են խօլերայի գլխաւոր
նշանները։

Առ հասարակ, երբ որ խօլերան սկսում է,
ժողովուրդը այնպիսի ահի մէջ է, որ նա ա-
մեն տեղ խօլերա է աեսնում և ամենաչնչին
փորացաւը կարծում է, թէ խօլերա է։ Թէ
փորն էլ լուծեց, կամ սիրան էլ խառնեց հօ-
վերջացաւ. վախկոսները զլուխները կորցրած
վազ են տալիս դէպի բժիշկը, գոյները քցած, սա-
ռը քրոինքը երեսներից վազելով, աչքերը
խոր ընկած և ամենազորմելի դրութեան մէջ։
Բայց հէնց որ բժիշկը միամնացրեց նրանց,
խօլերան վերջանում է ու այդ յուսահատ
մարդիկ յանկարծ իրանց փրկուած են տես-
նում։

Սրանք վախկոտներն են:

Կան և ուրիշ տեսակ մարդիկ: Սրանք խօ-
լերայից չեն վախենում, «չեն հաւատում»: Այդ-
պիսիները հակառակն են անում: Նրանք զգուշու-
թիւն ասած բանը չ զիտեն, մրգեր են ուտում
քէի են անում, արբում են ու իրանց ստա-
մոքսը խանգարում:

Խոլերայի ժամանակ մենք պէտք է հաղար
անգամ աւելի զղոյշ լինինք, քան թէ ուրիշ ու-
րիշ ժամանակներ: Կաւ է հարիւր անգամ հասա-
սարակ փորացաւը խոլերայի տեղ ընդունել,
քան թէ մէկ անգամ խօլերան փորացաւի
տեղ:

Ով որ տեսել է խօլերայով հիւանդներ,
նա լաւ զիտէ, թէ որքան փոփոխական է լի-
նում այդ հիւանդութեան ձեւը:

Բայց խօլերայի գլեւուրը նշանները ՓՈՐԼՈՒ-
ԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՓՄԽԵԼՆ Են:

Հին և նոր բժիշկները դիտել են այս կա-
նոնը:

Խօլերային միջնորդ աւտոմատ փորւածութիւն
պէտք է խօլերային համարել: Առծեւը լինում է ա-
ռանց ցաւի, երբեմն մի թեթև զալարումն է
զգում հիւանդը փորումն, որը ձեռ տալիս չի
ցաւում: Փորլուծութիւնը շատանում է, մի
քանի անգամ հիւանդը դուրս է զնում և սաս-

տիկ յոդնում է: Յետոյ սիրտը խառնում է ու
հիւանդը սկսում է ֆրեզ: Երբեմն լուծելլ
կրկնում է 20—30 անգամ օրական և աւելի,
նոյնպէս և վախելը: Այն ժամանակ հիւանդի
արիւնը ցամաքում է ու կաշին չորանում:

Երբ որ բանն այստեղ է հասնում, հիւան-
դի շնչառութիւնը առնելումէ, ծանրանում, ամ-
բողջ մարմինը, մանաւանդ ձեռներն ու ոտնե-
րը սառչում են և ջղերը սկսում են ձգձգուել:
Ուների, ձեռների և վզի մսերը կծկում են և
հիւանդը անասանելի առնջանքներ է կրում:

Արեան ցամաքելու հետ մէջն էլ է պակա-
սում ու ցամաքում, հիւանդը այլ ևս մէջ
(շեռ) չունի թափելու: Երբ որ հիւանդը այս
դրութեան մէջ է լնկել, էլ նորան փրկելու
ցոյս չկայ: Մի երկու օրուայ (երբեմն երկու
ժամուայ) մէջ հիւանդը զարմանալի կերպով
նիհարում է, աչքերը խոր լնկած, դէմքը
չորացած, փորը փոս լնկած, նրա ձայնը
խոպում է, ամբողջ մարմինը չորանում ու մա-
հը խլում է նորան շատ շուտով

Ասածներիցս երկում է, որ խօլերայի ժամա-
նակ ոչ մե մարտողական խոնգարումն չը պէտք է
անուշատ: Աէնց որ փորը լուծ ընկնի
կամ սիրտը խառնի, պէտք է բժշկին դիմել:
Առողջացող հիւանդը խսկոյն երկում է: Եթէ

հիւանդը մի լաւ քրտնում է, կամ սկսում է միզել, երբ դամարների կծկումն վերջանում է, երբ աչքերի փայլը վերադառնում է, երբ բերանի չորութիւնն անցնում է և այն, այն ժամանակ կարելի է ասել, որ նա կառող-ջանաց: Բայց խօլերան թեթև կերպով էլ է անց կենում: Չ պէտք է մոռանանք, որ այդ հիւանդութեան նշանները փոփոխական են: Հիւանդութեան նշանները փոփոխական են: Ուրեմն երբ որ մի հիւանդ մի երկու անգամ դուրս է գնացել կամ փսխել է և իրան լոգ-նած չի զգում ու շորերը հագած ման է գա-լիս սենեակում, նրա բարեկամները չը պէտք է անհոգ մնան ու կարծեն, թէ թեթև կանցնի:

Չը պէտք է անհոգ մնալ և այն ժամանակ, երբ հիւանդի լուծելը և փսխելը դադարել են: Բժշկի աչքը միշտ անպակաս պիտի մնայ խօ-լերայով հիւանդի վրայից: Բժիշկը միայն կա-րող է ասել, թէ հիւանդութիւնը վերջացել է թէ ոչ, կամ թեթև է թէ ծանր:

Ինչ և իցէ կան մի քանի նշաններ, որ ա-մէն մարդ պէտք է իմանաց:

Ահա այդ նշանները:

Սթեն անգամ, ինչ հիւանդը մէծ պահութեան ու-նի հենց հիւանդութեան ուղիւն, համարեա հարելք է աղահով լինել, որ նրա հիւանդութեանը իօլեր չէ: Սթեն անգամ, ինչ հիւանդութեան մէջոցին հի-

—անդը մէծ սրաբենի մէջ է ընդուռում, նու հարող է պրիուած համարուել: Նոյնը կարելի է ասել և երբ նրա մէջը շատանդում է:

ԳԼ. ԵՐՈՌՈՐԴ

Մէջ էլ հայուսութ էլլուր իրենենս մէր բալոր ասածնելը:
ա. Խօլերան կալչողական (տարափոխիկ) հի-ւանդութիւն է, որից կարելի է փախչել, ե-թէ զգոյշ լինենք:

բ. Խօլերայի բունը Հնդկաստանն է, Գան-գէս գետի ափերը: Այնտեղից է գալիս մեզ այս հիւանդութիւնը:

գ. Խօլերան տարածւում է մարդկանց մի-ջոցով, այսինքն, ուղղակի հիւանդից առողջին:
նու օրէ միջով չկ անցնում:

դ. Խօլերայի թոյնը գտնուում է խօլերա-յով հիւանդի արտաթորութիւնների մէջ (դուրս գնացածի ու փախածի):

ե. Վարակուելը լինում է ուտելիքի, խմե-լիքի, փոխնորդի և առհասարակ հիւանդին պատկանող բաների միջոցով, որովհետեւ նրանց վրա ընկած է լինում խօլերայի թոյնը:

զ. Այդ թոյնը զարգանուում է կեղտուա հո-ղի վրա, առ հասարակ կեղտուա տեղերում:

է. Զորութիւնն ու տաքութիւնը սպա-

նում են խօլերայի թոյնը, իսկ խոնաւութեան
մէջ ընդհակառակին նա զարգանում է:

ը. Խօլերան հիւանդից անցնում է առող-
ջին հիւանդի կեղտուած փոխնորդի, անկողնու,
մի խօսքով այն ամէն բաների միջոցով, որոնց
վրա ընկել է խօլերայի թոյնը:

թ. Կեղտու ջուրը, որի մէջ թափած են
եղել խօլերայով հիւանդի արտաթորութիւն-
ները, ամենաերկիւղալի բանն է, որովհետեւ
հիւանդութիւնը տարածւում է մեծ մասամբ
այդպիսի կեղտուած ջրի միջոցով:

ժ. Ամէն տեսակ չափազանցութիւններ վնաս
են: Շատ աշխատողները, շատ միտք անողները,
շատ չարչարուղները, վախկոտները ամենից
շատ են հիւանդանում:

ի. Հիւանդանում են շատ և նրանք, որոնք
լաւ մնունդ չունեն, լաւ չեն ուտում-խմում
ու խոնաւ տան մէջ են ապրում:

լ. Շատ հիւանդանում են մանաւանդ քէֆ
սիրողները, արբեցնղները և նրանք, որոնց
մարսողականը տկար է:

լս. Հիւանդանում են և նրանք, որոնք զո-
ռով խանդարում են իրանց ստամոքսը անկարգ
ուտելով, իսակ մրգեր գործ ածելով և այլն:

ծ. Թթուն ու աղտահանիչ միջոցները ըս-
պանում են ու ոչնչացնում խօլերայի թոյնը:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Խ Ֆ Ա Տ Ն Ե Ր

ԽՈԼԵՐԱՅԻ ԴԵՄ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Խ Թ Ա Տ Ն Ե Ր

Հիմի մենք ծանօթ ենք խօլերացին, գիւ-
տենք, թէ որտեղ է գտնում նորա թոյնը,
ինչպիս է աճում նա ու ինչպէս է անցնում
հիւանդից առողջին։ Լաւ հասկացանք նմանա-
պէս, թէ ինչն է սպանում այս թոյնը։

Մեր այս բոլոր ասածներիս հիման վրա
գրքոյին այս մասում մենք տալիս ենք մի
շարք խրառներ, որոնք ցոյց են տալիս, թէ
ինչ պէտք է անել մինչև խօլերացի երեալը
երբ նա արդէն մտել է մեր երկիրը։

Գարունը բացուել է, կարելի է հէնց վա-
ղը խօլերան էլի իր գլուխը բարձրացնի։ Հիմի
իսկ և եթ պէտք է պատրաստուենք, զինուոր-
ուենք։ Դրա համար ահա մեր խորհուրդները։

Ա. ԽճԶ ՊէՏՔ է ԱՆԵԼ ՀԻՄԻ ԵՒ ԵԹ ՄԻՆՉԵՒ
ԽՅԱԲԱՅԻ ԵՐԵՒԱՆԻ:

1. Խակոյն, հէնց հիմի, ամեն քաղաքում ու
գիւղում քահանան, վարժապետը, կամ ուրիշ
դրագէտ մարդիկ, պիտի անդրագէտ գիւղացի-
ներին երեխները հաւաքին ժողովարաննե-
րում ու նրանց կարգան խօլերայի մասին գլ-
րած գրքերը, բացատրեն նրանց այս խրատ-
ները:

Այսպիսով, գիւղացիք կը ծանօթանան ե-
կող թշնամուն ու կը պատրաստուեն կոռուկու
նրա հետ:

Ծանօթ. Եթէ գիւղում այդպիսի գրագէտ
մարդիկ չկան, գաւառական խնամատար մաս-
նախումբը մի հասկացող մարդ կ'ուղարկի
գիւղի ժողովրդին պատրաստելու, կամ թէ չէ
գիւղի քահանան պիտի բացատրի գիւղացինե-
րին այս գիւղը:

2. Խւրաքանչիւր գիւղում պէտք է աշխա-
տել մի տուն գաւառիկել խօլերայով հիւանդ-
ների համար, որ խօլերան երեալուն պէս ա-
ռաջին հիւանդներին այնտեղ տանեն:

Այս տան մէջ գաւառական բժշկի և գա-
ւառական սանհտար խմբի օգնութիւնով ամեն
հարկաւոր բաներ պէտք է պատրաստի պահել:

3. Ամեն մէկ քաղաք ու գիւղ պիտի դեղե-
րի և աղտահանիչ զեղերի պաշար ունենայ:
(Տես ներքեւ. «աղտահանիչ զեղեր»): Բացի այդ
պիտի թէց ու շաքար, արաղ, գինի պատրաստ
ունենալ, որ խօլերան տարածուելիս կարելի-
լինի օգնութիւն հասցնել ժողովրդին, ևս ա-
ռաւել գիւղերում:

4. Ամեն մի գիւղացի պիտի իր բակը, իր
ախոռը, իր տունը, իր տան դէմը մաքուր
պահի:

Ծանօթ. ա. Եթէ տան մէջ ախոռը ջոկ է,
այն ժամանակ քնելու սենեակը կամ հացա-
տունը հեշտ է մաքուր պահել: Գետինը պէտք
է շուտ շուտ աւլել, չ'ըրջկել ու, թէ խոնա-
ւութիւն կայ, պէտք է կիր ցանել, որ չորա-
նայ:

Ծանօթ. բ. Եթէ անսառւնները միւնոյն-
տան մէջն են, թէ հնար կայ, լաւ կ'լինի
տան յատակը սալել, որ անսառւնների ջրվէ-
թը չ'թացացնի գետինը, այլ փոքրիկ առութ-
պէս դուրս թափուի:

5. Ամեն գիւղացի պիտի մինչեւ նոր հացը
հասնելը ուտելու պաշար ունենայ: Հարկաւոր
է հիմի և եթ ճար անել:

6. Հիմի իսկ և եթ պէտք է մտածել ար-
տաշնոցների մասին: Գիւղական տներում արտաք-

ներ մեծ մասամբ չ' կան, ու գիւղացիք (ի՞նչ-
պէս ասացինք) դուրս են գնում՝ թէ իրանց
հայաթում և թէ ուղղակի պատերի տակ:

Այս գարշելի սովորութեան դէմ պէտք է
կոռւել, որովհեաւ նրա մէջն է ամենամեծ եր-
կիւղը: Ամեն մէկ գիւղացի պիտի հասկանաց,
որ այդ սովորութիւնը իրան էլ կարող սպա-
նել:

Թող գիւղացիք ժողովուեն, քաղաքի սանի-
տար խմբից մէկին հրաւիրեն ու վճռեն, թէ
Բնչ անեն այդ անտանելի սովորութիւնը վեր-
ցնելու համար:

Օրերը տաքանալիս, գիւղացին էլ չ'պէտք
է իր կեղար իր դուն դէմքցի, որովհեաւ, ե-
թէ հիւանդութիւնն իր գիւղն ընկնի, առա-
ջին հիւանդացողն նա կ'լինի: Պիտի ամեն
տուն մտածի ու հնար գտնի մի արտաքնոց
շինելու:

7. Գիւղից դուրս բնակիչները պիտի փո-
սեր փորեն 1 արշին խորութիւնով ու այն-
տեղ թափեն իրանց կեղարը և արտաթորու-
թիւնները, որոնց վրա իսկոյն կիր կամ հող
ածեն:

8. Եթէ արտաքնոցների հորերը լիքն են,
հարկաւոր է մինչև խօլերացի երեւալը մաքրել
նրանց ու կեղար քաղաքից դուրս տանել, ո-

որովհեաւ, հէնց որ խօլերան երեւաց, էլ չը
կարելի այդ անել:

9. Տան կեղարը, կեղասոս ջրերը, ուտե-
լիքից մնացորդները և այն պիտի մի կողովի
կամ մի արկղի մէջ ժողովել և շուտ շուտ
քաղաքից ու գիւղից դուրս տանել:

թ. Խնջ Պէտք է Անել, Երբ ԽօԼԵՐՍՆ ԱՐԴԻՆ ԵՐԵՒԱՑԵԼ
է ՀԱՐԵՒԱԾՆ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԵՒ ԳԻՒՂԵՐՈՒՄ:

10. Երբ ձաջն դայ, թէ մօտի երկրներում
խօլերան արդէն երեւացել է, քաղաքացիք և
գիւղացիք պիտի հաւաքուեն ու իրանց քա-
ղաքի և գիւղի փրկելու մասին մտածեն ու
վերև յիշած միջոցները բոլորը կատարեն:

11. Քաղաքացիք և գիւղացիք, եթէ կա-
րելի է, պիտի կտրեն իրանց յարաքերութիւն-
ները և երթևեկութիւնը հիւանդացած գիւ-
ղերի հետ, կամ այն գիւղերից եկածների հետ
զգոյշ լինին:

12. Եթէ ժողովուրդը գետի ջուր է գործ
ածում և եթէ այդ գետի վերևի գիւղերում
հիւանդութիւն կայ, պիտի այդ գետի ջրից
չափազանց զգոյշ լինել, այսինքն. առանց ե՞ն պա-
շտ չդորժածել և հարաց ճեղ չլուսանալ:

13. Այդ ժամանակ չ'պէտք է շատ մարդիկ մի տեղ հաւաքուեն: Ուխտ գնալիս պիտի քչոր լինել և ուրիշ տեղերից եկածներին չ'խառնուել, մանաւանդ այնպիսի տեղերից, որտեղ խօլերա կայ:

14. Հասկացողները պիտի ժողովին ժողովրդին ու նրանց միամտացնեն, որ չ'վախենան ու հանգստանան:

15. Եթէ յանկարծ մի գիւղում խօլերան սաստիկ տարածուեց ու շատ մարդ է կոտորում և հնար չի լինում կանգնացնել նրան, պէտք է ժողովուրդը սարերը քաշուի ու վըրաններում իրարից հեռու ապրեն:

16. Ժողովրդի հարուստ, ունեոր մասը, զանազան լնկերութիւնները պիտի օդնեն չունեոր աղքատ մասին, հէնց իրանց օգտի համար, որովհետեւ եթէ չ'օդնեն ու թողնեն, որ հիւանդութիւնը տարածուի քաղաքի կամ գիւղի մէջ, իրանք էլ կարող են հիւանդանալ ու մվասուել: Այս է պատճառը, որ ամեն քաղաքում ու գիւղում ունեոր մարդիկ պէտք է ձրի թէցատներ սարքեն, կամ թէց-շաքար բաժանեն աղքատներին, քաղցածներին կերակրեն և այլն:

Գ. Խօնջ Պէտք է Անել, Երբ ԽՇԼԵՐԱՆ ԱՐԴԻՆ
ՔԱՂԱՔԸ ԿԱՄ ԳԻՒՂՆ Է ՄՏԵԼ:

17. Հէնց որ քաղաքի կամ գիւղի մէջ մի մարդ հիւանդացաւ, գիւղացիք պիտի հազարապատիկ աւելի զգոց լինեն: Բայց թող ոչ ոք չը փախչի իր տեղից, չ'թողնի իր տունը-տեղը, իր կալը, իր աշխատանքը: Ամենքը պիտի հասկանան, որ խօլերացից փախչել չի կարելի, որ ամեն տեղ խօլերան կարող է հասնել նըրան: Ընդհակառակն, եթէ ամեն մարդ իր տեղը մնայ ու գործադրի մեր տուած խրատները, նա կ'փրէ թէ իր անձը, թէ իր կարողութիւնը և թէ իր գործերից ետ չի ընկնի: Տեսնենք, թէ Բնէ պիտի անուի առհասարակ քաղաքի կամ գիւղի մէջ և հիւանդի տանը:

I. Քաղաքի կամ գիւղի մէջ:

18. Երբ որ մէկը հիւանդանում է, քաղաքի կամ գիւղի բնակիչները չ'պէտք է սարսափի մէջ ընկնեն: Նրանք պէտք է հասկանան, որ իրանց պարտքն է օդնել հիւանդին և նրա տանեցոցը:

19. Եթէ հիւանդի բնտանիքը աղքատ է, միւսները պէտք է օդնեն նրան ուտելիք և

խմելիք հասցնելով, թէ հիւանդին և թէ նրա
տնեցոց և ամեն կերպով օգնեն տնեցոց, որ
նրանք էլ չկպչեն, որովհետեւ եթէ նրանք էլ
հիւանդանան, խօլերան աւելի շուտ կը տա-
րածուի գիւղի մէջ:

20. Այդ տան հարևանները պէտք է հետե-
ւեն, որ հիւանդի կեղտերը իրանց դռան ա-
ռաջ չը թափուեն, որ հիւանդի տնից շուտ
շուտ չը դան-դնան իրանց տունը ու այնտե-
ղից բերած հացը կամ կերակուրները չը վեր-
ցնեն: Իրանք կարող են գնալ հիւանդին տե-
սութիւն, բայց զգոյշ պիտի պահեն իրանց:

21. Պէտք է հետեւել, որ հիւանդի շորերը
այն ջրի մէջ չը լուացուեն, որը գիւղացիք
գործ են ածում (օրինակ. գետի ջրում):

22. Այս ժամանակ ամենահարկաւոր բանն
այն է, որ ամեն մէկը հետեւի իր ընդհանուր
առողջութեանը և չը մոռանայ, որ պէտք է
լաւ կերակրուի, իրան տաք պահի, յետոյ քա-
նի կարելի է քիչ աշխատի, որ չը յոդնի, խո-
նաւ գետնի վրա չը պառկի, մարտողականը
չը խանդարի արբեցողութիւնով և անկանոն
ուտել-խմելով: Մի խօսքով. պէտք է կատարի
այն բոլոր խօրհուրդները, որոնք յիշուած են
այս գրքի մէջ:

23. Բայց ամենից աւելի պէտք է զգոյշ լի-

նել մրգերից, որոնք, ինչպէս ասել ենք կարող են
սասանիկ ստամոքսի խանդարում առաջացնել:

Մրգերի վերաբերմամբ այս մի քանի խոր-
հուրդները կը տանք:

ա. Խակ մրգեր բոլորովին չուտել, կամ ե-
փել և այնպէս գործ ածել:

բ. Հասած մրգերից արգելուած է ուտել
թութ, ծիրան, սեխ, դութմայ, ձմերուկ:

գ. Մնացած մրգերը կարելի է գործ ածել
միայն հացից յետոյ և շատ չափաւոր, օրի-
նակ. մի գեղձ, մի խնձոր, մի նոր վարունկ (խի-
ար), այն էլ անպատճառ կլպած:

դ. Մանր մրգերը, որոնք չեն կլպւում, օ-
րինակ. գիլաս, շլոր, գամբուլ, բալ, խաղող,
կարելի է գործ ածել միայն եփ տուած ջը-
րում լաւ լուանալուց յետոյ: Բայց ամենից
ապահովն այն կը լինի, որ լուանան նրանց
լիմոնի աղի խառնուրդի մէջ:

ե. Միւս կլպւող մրգերից. տանձը, խնձորը,
խիարը, գեղձը և այլն պէտք է անպատճառ
կլպել և այնպէս ուտել:

24. Առ հասարակի պէտք է աշխատել քիչ
քիչ ուտել և շուտ շուտ, և ոչ թէ ստամոքսը
ծանրացնել շատ ուտելով միանգամից ու, որ-
քան կարելի է, մսեղէն ու կաթնեղէն գործ
ածել:

25. Խորհուրդ ենք տալիս ճաշից ու իրեկ-նահացից յետոյ կէս բաժակ ջրի մէջ 5-6 կաթիլ աղաթթվու (соляная кислота) ընդունել:

26. Լաւ հեշտամարս ուտելիքը վնաս չէ: Զը պէտք է խորյն փոխել սովորած կերա-կուրները: Առ հասարա՛ չ'պէտք է գործ ածել շատ չաղ, եղալի և հում կերակուրնեղ, աղի խորակներ, որոնք ծարաւեցնում են և շատ ջուր են խմել տալիս:

27. Դժուարահարս են ու երկիւղալի հե-տեւեալ ուտելիքները. — Հում բանջարեղէնը (զաղար, շաղիամ, բողկ, թթու կաղամբ), խո-զի միս, կալբաս, վաս պանիր, թթուած սեր ու մածուն, տաք ու հում հայ:

Ծանօթ. ա. Այս գժուարամարս ուտելիքները նամանաւանդ երկիւղալի են մրգերից յետոյ:

Ծանօթ. բ. Սոխ ու սխտոր չը պէտք է գործ-ածել, քանի որ նրանք սասարիկ ծարաւեց-նում են և ուրեմն շատ ջուր խմեցնում:

28. Ամենալաւ խմելիքը խօլերայի ժամա-նակ եփ տուած ու սառեցրած ջուրն է ու նոյն-պէս եփ տուած կաթը: Զրի մէջ կարելի է քցել մի քիչ դինի կամ թթու (լիմոնի աղ, նռան հիւթ և այլն): Արազ, գինի կարելի է խմել շատ չափաւոր կերպով: Գարեջուր ու կփաս լաւ է չխմել բոլորովին: Քրտնած ժա-մանակ պէտք է քիչ խմել: Թվու իմելքսները,

ինչպէս լիմոնադը, օգտաւէտ են: Զելտերեան ջուրը զգուշութիւնով պիտի խմել, իսկ սօդո-վայեա ջուրը (содовая вода) վնաս է:

29. Նաև սառը խմելիքներն ու ուտելիք-ներն էլ վնաս են: Այսպէս, սառուցով ջուր, սառուցով կաթնապուր, ակրոշկայ, պաղպա-ղա՛ և այն լաւ է գործ չ'ածել:

30. Փորն ու ոտները պէտք է տաք պահել, որ չը մրսեն: Չ'պէտք է թաց շորեր հագնել, կամ խոնաւ տեղ պառկել քնելու, որ փորը չ'մրսի, ևս առաւել վնասակար է փորի վրա գետնին պառկել:

31. Լողանալը մաքուր ջրում սովորածի համար վնասակար չէ: Գետի մէջ լողանալը տաք եղանակում կարելի է (այն էլ եթէ գետի վերելի մասերում խօլերա չ'կայ), միայն ջրից դուրս գալուց յետոյ անպատճառ պէտք է մար-մինը լաւ չորացնել ու շորերը հագնել և մի քիչ սոսով ման գալ, որ տաքանան:

32. Հացից յետոյ խորյն լողանալ չի կա-րելի, պէտք է ամենաքիչը մի երեք ժամ մէջ տալ, թէ չէ տամարքուր կը փշանայ ու մար-սողութիւնը կը վատանայ:

33. Խորհուրդ են տալիս բրդէ փորկապ գործ ածել շապկի տակից: Ոչ մի փորացաւ չը պէտք է տանց բժշկելու թողնել: Հէնց որ

կը զդաք, թէ մարտողութիւնը փչացել է, այսինքն. կամ սիրտն խառնում է, կամ փորը լուծում է, կամ ցաւում է, իսկոյն պէտք է զիմել բժշկին:

II. Հիւանդի տանը:

34. Եթէ քաղաքում կամ գիւղում առանձին տուն արդէն սպատրաստուած է հիւանդների համար, այդ հիւանդի ծնողներն ու բարեկամները պիտի աշխատեն նրան այնող տանել:

35. Եթէ այդպիսի տուն չը կայ, կամ հիւանդը չի ուզի այնտեղ գնալ, այն ժամանակ հարկաւոր է աշխատել, որ տնեցիք չը փոխուին: Վրտ համար պէտք է ամենից առաջ հիւանդի փախածը և դուրս գնացածը միշտ առանձին ամանով դուրս տանուեն իսկոյն և թաղուեն կրի մէջ:

36. Տան մէջը մէկին պիտի յանձնուի հիւանդին խնամելը, այսինքն. նրա կեղակը մաքրել, կերակրել և ալին, իսկ մնացածները կարող են հիւանդի մօտ նստել, նրա հետ խօսել, բայց ոչ նրա կողքին քնել, ոչ նրա շորերը հագնել, ոչ նրա հետ մի սուփրի վրա հաց

37. Եթէ տունը բաղկացած է երկու կամ մի քանի սենեակներից, հիւանդի համար պէտք է ընտրել ամենաընդարձակը և այնպիսին, որը առանձին լինի, այսինքն այնպիսին, որ ճանապարհի վրա չլինի: Իսկ եթէ տունը մի կոռորից է բաղկացած, այն ժամանակ պէտք է, եթէ կարելի է, հեռացնել տանից աւելորդ անդամներին և նրանց ուրիշ տեղ պահել: Եթէ այդ էլ չի կարելի, պէտք է հիւանդին մի առանձին անկիւնում պառկացնեն:

38. Հիւանդին խնամողը կրկնապատիկ լոգոյց պիտի լինի: Նրա մօտ նստելիս, նրա կեղարը մաքրելիս, շորերը փոխելիս նա պիտի գոգնոց կապած ունենայ և թեւերն էլ թեւնոց հագած: Այդ բաները կատարելուց յետոյ, նա ամեն անգամ պէտք է անսրածառ ձեռները տաք ջրով և սապօնով լուանաց, կամ աւելի լաւ է կապոյտ քարի ջրով, ևս առաւել, երբ որ հացի կը նստի: Իր տնեցիքի հետ ճաշ անելիս, կամ մինչեւ անգամ մօտ նստելիս, նա պէտք է իր գոգնոցն ու թեւնոցը հանի և ձեռներն ու երեսը լուաց:

39. Վրսից եկող բարեկամներին կամ գրացիներին արգելել հիւանդի մօտ երկար մնալ, ձեռ տալ, մանաւանդ համբուրել, իսկ եթէ

ձեռ են տուել, գուրս գալիս պէտք է անպատճառ ձեռները լուանան:

40. Բոլոր ուտելիք ու խմելիքը, շորերն և աման-չամանները պէտք է անպատճառ ինչքան կարելի և հիւանդից հեռու տեղ պահել: Այսիները, գալիները և այն գործածելուց առաջ պէտք է եռման ջրում ողողել:

41. Եթէ հիւանդի փոխանքը կամ կեղտերը գետին են թափել, կամ փոռւածքի ու ուրիշ բաների վրա ընկել, պէտք է խկոյն գետինը կիր ածել, փոռւածքը գուրս տանել ու կեղտառած տեղը լուանալ կամ կրի ջրի մէջ, կամ կապուտ քարի խառնուրդի մէջ:

ՀԻՒԱՆԴԻՆ ԽԱՍՄԵԼՈՒ ԽՐԱՏԵՆԵՐ:

42. Եթէ հիւանդը ջոկ սենեակումն է պէտք է չը վախենալ լուսամուտը կամ դուռն օրը մի քանի անգամ, եթէ եղանակը լաւ է, բաց անել օդը փոխելու համար: Չմեռ ժամանակն էլ պէտք է վառարանը վառել ու օրը մի քանի անգամ լուսամուտները բաց անել:

43. Հիւանդի փոխնորդը շուտ շուտ պէտք է փոխել և հիւանդի մարմինը մաքուր պահել: Թէ հիւանդի կեղտառած շապիկը և թէ դոշակի սաւանը ու բարձի երեսը պէտք է հա-

նելուն պէս քցել տաշտի մէջ և վրան աղտահանիչ գեղեր ածել:

Ծանօթ: Առհասարակ հիւանդների տանը մի առանձին տաշտ կամ վեդրօ պէտք է պահել այդ աղտահանիչ ջրերով լիքը, որ հիւանդի կեղտառած շորերն ու բաները խսկոյն նրա կեղտառած շորերն ու բաները խսկոյն նրա մէջ քցեն: Վի ուրիշ ամանով էլ պէտք է պահուի այդ ջրից, որ հիւանդին զիալողները լուացուեն:

44. Հիւանդի անեցիք պիտի փոխնորդից միշտ վախենան: Ակ որ քիչ շատ կարողութիւն ունի պիտի այդ կեղտառած շորերը այրի, իսկ ով որ չի կամենալ ոչնչացնել այս շորերը, մենք խորհուրդ կըանակ այս երկու միջոցները դորձնել. ա) շիբով ջրի մէջ եփ տալ և բ) թոնրի մէջ չորացնել:

Ծանօթ. Աւելի լաւ է աղքատ աներում գոշակի տեղ գարման կամ խոտ քցել, մի բանով ծածկել ու նրա վրա պատկեցնել հիւանդին, որով կահետե այս խոտը ու դարմանը տմեն օր կարելի կը լինի այրել:

ա) Կեղտառած պիտակեղները պէտք է հաւաքել մի պղնձի մէջ, որի մէջ կ'ածեն շիբախառն ջուր ու մի քանի ժամ եփ տալ:

բ) Թոնրի մէջ թաց փոխնորդը չորացնելը անվես է դարձնում այդ շորերը: Վենք խորհուրդ ենք տալիս թոնրիը լաւ վառել ու

հիւանդի շորերը կախ տալ այնքան, որ չու-
րանան, յետով հանել ու սապօնով լուանալ:
Կամ թէ չէ հէնց ուղղակի առաջ լուանալ ու
յետոյ թոնրի մէջ լաւ չորացնել:

Ի՞նչ պէտք է անել հիւանդին մինչև
բժշկի գալը, կամ եթէ դիւղում
բժիշկ չկայ:

45. Հէնց որ մէկը զգաց սասամիքսում
ծանրութիւն, կամ թեթև ցաւ, կամ մանա-
ւանդ եթէ սիրտը խառնեց կամ փորն սկսեց
լուծել, պէտք է նրան պառկեցնել, տաք
ծածկել ու փորին դնել կամ կտաւատի փա-
թեթ, թեփ, աւազ, աղ, կամ տաք ագուր
(քարփինջ) ու խուփի

46. Եթէ հիւանդի սիրտը խառնում է,
կամ նա ործկում է, պէտք է իսկոյն թթուաշ
սառը ջուր (լիմոնով, կամ նուան հիւթով)
խմեցնել:

47. Եթէ այդ չի օգնի ու սրտի խառնե-
լը կշարունակուի, աւելի լաւ է մանր կտոր
սառուց կուլ տալ տալ:

48. Իսկ եթէ այդ էլ չի օգնի ու եթէ
հիւանդի փորն էլ գնում է (այսինքն. լու-
ծում է), պիտի նրան ընդունել տալ այն գե-

ղերը, որոնք գտնւում են բժշկի, կամ քահա-
նաների, պոլիցիականների, սանիտար խմբերի
ձեռին:

49. Եթէ հիւանդի ոտներն ու թերը
ձգձգում են, պիտի մերսել նրանց մի կտոր
մահուգով, կամ բրդէ գուլպայով, կամ հէնց
իսկ ձեռներով:

50. Ոչ մե ժամանակ հիւանդից չ'պէտի է
քի-ն տանել չամ սասալ ըստ-ը ածել վլան:

51. Ոչ մե ժամանակ չ'պէտի է ածանը դանել
պատաներն և հետիներն (բալլար) և նրանց պե-
ճելը ընդունելու:

Ծանօթ. Կովկասի բժիշկների ժողովը արգե-
լեց չամանի ու միւս թունդ սպիրդի գեղեց
գործածել և ասեց, որ նրանք վես են:

Դեռ անցեալ տարի մենք չամանի գործա-
ծելը արգելեցինք և ժողովուրդը վերջը ին-
քըն էլ հասկացաւ, որ այդ գեղը ոչ միայն օ-
գուտ չէ, այլ վես է: (Տես. «Մշակ» № 95.
1892 թ.)

51. Եթէ հիւանդը առողջանում է, այս-
ինքն. նրա փսխանքն ու փորլուծութիւնը դա-
դարում են, չ'պէտք է նրան շատ կերակութներ
տալ, պէտք է դեռ սպասել, որ բոլորովին ա-
ռաղջանայ, թէ չէ կրկին խօլերան կ'նորոգու-
ու էլ հնար չի լինի հիւանդին փրկելու:

Յահով. Ով որ մի անգամ խօլերա է ընկել,
նա չպիտի թողնի զգուշութիւնները ու կար-
ծի, թէ էլ խօլերան նորան չի կպչի:

52. Խօլերայից թեառծի հաքմնը պիտի փա-
թաթուի սաւանում, որ կարբոլիայի մէջ թըր-
ջած կ'լինի, ու դրուի դագաղի մէջ: Լաւ է,
եթէ դագաղը նեքսելից կպրած լինի, որ
մարմնի միջի թոյնը դագաղից դուրս չգայ:

53. Ամեն քաղաքում ու գիւղում պիտի
առանձին սացլեր պահուեն դագաղները գե-
րեղմանատուն տանելու համար: Զեռով արգե-
լուած է տանել:

54. Գերեզմանը պիտի որբան կարելի է խո-
րը փորուի: Դագողը պէտք է ծածկուի մի
շերտ կրով:

55. Հիւանդի մահից յետոյ, ամբողջ տու-
նը, նրա միջի բաները պէտք է աղտահանուեն
բժշկի կամ սանիտար խմբի ձեռքով:

ԱՂՏԱԿԱՆԻՉ ՄԻԶՈՑՆԵՐԻ:

Ինչպէս քանի անգամ ասել ենք, մենք կա-
րող ենք խօլերայի թոյնը դանագան կերպով
ոչնչացնել: Խօլերայի թոյնը սպանելու միջոց-
ներն ասւում են աղբահանիչ մջացներ, ու այն
գեղերը, որոնք դործ են դրւում թոյնը ոչըն-

չացնելու համար, կոչւում են աղբահանիչ կամ
աղբահանիչ գեղեցիկ գեղիա-դէյնֆէկցիա: Մենք այստեղ նորից կ'կրկնենք ու մէկ մէկ ձեր
միաքը կ'քցենք ինչ որ ասել ենք այդ բանի
մասին:

1) Ամենից լաւ աղտահանիչ միջոցը ի
հարկէ կրակն է. հիւանդի կեղտուած շորերն
ու տեղաշորերն ամենից լաւն այն է, որ այ-
ցուեն: Այրելիս միևնոցն ժամանակ մենք ի
հարկէ թոյնն էլ ենք ոչնչացնում: Բայց խօ-
լերան մեծ մասը աղքատների մէջն է տա-
րածում ու աղքատի համար մի շապիկ ու
մի գոշակ թանկ բան է. նա չի ոչնչացնի այդ
բաները: Ուրեմն լաւ կ'լինէր, եթէ ամեն տեղ
առանձին գումար լինէր, որ այս ալրուած շո-
րերի գինը վճարուէր աղքատներին, որ սրանք
չթագցնեն այդ բաները ու նրանց հետ խօլե-
րան չ'տարածեն:

2) Եթէ այրել անկարելի է, պիտի այդ
շորերը լաւ եփ տալ շբի կամ կապոյտ քարի-
ջրում, յետոյ սապօնով լուանալ ու թոնրի մէջ
չորացնել: Թոնրի մէջ պէտք է լաւ չորացնել
այն բաներն էլ, որ չի կարելի լուանալ:

Աղաւհանիչ է դեղերը:

Ա) Կիր: Ամենից յարմար ու ամենից էժան զեղը կիրն է, չհանգրած տաք կիրը: Կիրը երկու կերպ կարելի է դործածել—չոր ու ջրի մէջ բաց արած:

ա) Չոր տառք է իրը պէտք է ամեն տան մէջ լինի. Գիւղերում ու քաղաքներում պիտի մի մեծ ամբար կիր պահուի: Չոր կիրը ցանում են ուղղակի հիւանդի արտաթորութիւնների (դուրս գնացածի, փախածի) վրա: Պէտք է ցանել այնքան, որ նրանք ծածկուեն: Եթէ այդ կեղտոտութիւնները գետին են թափած, պէտք է հողը չորացնել այդ կրով:

բ) Կրի ջրաբ իտ իրե իտե: Այս ջուրը շինելու համար վերցնում են մի մասը տաք կիր (չհանգրած) հինգ մաս ջրի մէջ բաց են անում, գառնում է կաթ, որ ածում են թէ արտաթորութիւնների վրա և թէ արտաքնոցների հորը:

բ) Քուքուրդային կիր (ծծումբ, ծըծումբի հող) դործ է ածումնոյն ձեռվլ:

գ) Կարբօլկա կամ կարբօլեան թըլթւուա, որը պէտք է ամեն տեղ պահուի և որից զանազան խառնուրդներ են պատրաստում: Օրինակ, 2 մասը կարբօլկա — 100 մաս

ջուր, կամ 3—4—5 մաս կարբ.—100 մաս ջուր: Թոյլ խառնուրդը (2 մ. կարբ.—100 մ. ջուր) կարելի է դործածել հիւանդի մօս նըստողի ձեռները լուսալու համար: Թունդ խառնուրդները (3 մինչև 5 մ. 100 մ. ջըրում) դործ են ածում կեղտոտ բաները լուսալու համար:

դ) Կապոյտ քար կամ ալջասպակը մէկը պղնձի, կան երկու տեսակ արջասպներ—մէկը պղնձի, միւսը երկաթի:

Պղնձի արջասպը (կապոյտ քար) վերցնում են 2 մաս ու հալցնում են 100 մաս ջրի մէջ: Այդ խառնուրդով կարելի է ձեռները, երեսը ու հիւանդի կեղտոտած բաները լուսանալ:

Երկաթի արջասպը աւելի թոյլ է ու նըստութիւնը կամ հալցնել 15 մաս 100 մաս ջրի մէջ: Դործածութիւն—ինչպէս կապոյտ քարինն է:

ԳԵՂԵՐԻ:

Խորհուրդ ենք տալիս, գիւղերում և քաղաքներում «հետեւեալ գեղերի պաշար ունենալ:

1. Բօոկինի կաթիլներ:

2. Խոզեմցեկի կաթիլներ:

3. Վալերիանի կաթիլներ:
 4. Հովհաննի կաթիլներ:
 5. Աղաթթու կայ աղային թթուուտ—
(соляная кислота).
 6. Քաֆըրի սպիրու:
 7. Նաշատիր:
 8. Օդեկոլոն, քացալու:

Խրաքանչիւր սրուակի վրա մանրամասն
խրատներ կը կպցուեն գեղի գործ ածելու մա-
սին: Բայց, եթէ հնարաւոր է, չը պէտք է բա-
բաւականանաւ այսպիսի գեղերով, այլ հարկ է
դիմուլ բժշկին:

ՑԱՆԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ:

Երես.	3
Առաջաբան	
Ինչ է խօլերան և մարդիկ ինչպէս են հիւանդանում:	
	7
Խօլերացի բունը ու նրա տարածուելու ձեզ	9
Խօլերան Աստծու պատիժ չէ	
Ի՞նչ է խօլերան և մարդ ինչպէս է հիւանդա- նում	12
Խօլերակին թունը	15
Արտաթորութիւններ	16
Զուր	18
Խօլերան կեղաստ տեղերն է տարածում	22
Խօլերան թուլ անմնունդ մարդկանց է բանում.	25
Ամենից շատ վնաս է տալիս մարդուն խօլե- րակալսութիւնը	—
Մարսողականի տկարութիւնը վնաս է	26
Լուծողականներ, անկանոն գեղեր ընդունելը	27
Արիւն առնելն ու սառը ջուրը.	28
Խօլերայ հիւանդանութեան նշանները	30
Ամիտիումն	35
ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ	
Խրատներ.	39
Ի՞նչ պէտք է անել հիմի և եթ մինչև խօլե- րակի երևալը	40

Ինչ պէտք է անել, երբ խօլերան արդէն երեւացնել է հարեան քաղաքներում և գիւղերում	43
Ինչ պէտք է անել երբ խօլերան արդէն քաղաքը կամ զիւղն է մաել	45
I. Քաղաքի կամ զիւղի մէջ	—
II. Հիւանդի տանը	50
Հիւանդին խնամելու խրատներ	52
Ինչ պէտք է անել հիւանդին մինչեւ բժշկի գալը, կամ եթէ զիւղում բժիշկ՝ չկայ	54
Ազտահանիչ միջոցները	56
Ազտահանիչ զեղերը	58
Դեղեր	59

Աղաթթու (48), Ալոռա (41), Աղտահանիչ միջոցներ
 (56—57), Աղտահանիչ գեղեր (57—59), Ամփոփումն (35),
 Աղբեցողութիւն (27, 36), Աղտաթորութիւններ (16),
 Աղտաթորութիւն (41—42), Աղջասով (57), Աղեւն առնելը
 (28—30):
 Բժշկութիւն—տնային (54—55), Բողկ (27):
 Գեղեցման (56), Գարեցուր (48):
 Գաղազ (56), Գիշակ (խօլերայից մեռածի (56), Գեղեր
 (59—60):
 Գելտերեան չուր (49):
 Թթու (36, 48—49), Թթու կաղամբ (48), Թթւած
 ոէր ու մածուն (27), Թոնիկ (53):
 Լողանալը (49), Լուծողականներ (27):
 Խօլերայի բունը և տարածուելու ձեւը (7), Խօլերան
 Աստու պատիճ չէ (9), Խօլերային թոյնը (15), Խօլերա-
 վախութիւն (25), Խմելք (48—49), Խուլ միրք (47):
 Կաթ (48), Կալգան (55): Կալբաս (27). Կեղասոս տե-
 ղեր (22), Կիլ 57—58) Կարբուլկա (58): Կապոյտ քար (59).
 Հիւանդութեան նշաններ (30): Հիւանդին խնամելու
 խրատներ (52—54): Հիւանդի տանը (50—51): Հիւանդա-
 նալու ձեւը (12—21):
 Մաքսողականի տկարութիւններ (26, 33, 36): Մա-
 հուան նշաններ (33):
 Զուրը (18—21): Զըհոր (20):
 Տաքութիւն և քրանչոք խօլերայի ժամանակ (34)
 Փորլուծութիւն և փոխանք (32, 45):

«Ազգային գրադարան



NL0255027

